

մար, նա, «Մշակը» դուրս հանեց և շարունակում է դուրս հանել իր «Շ»-երը: Եւ ահա վերջին № 146-ում էլ դուրս է եկել մի «Շ»:

Ո՞վ են էս «Շ»-երը, և կամ ո՞վ է էս վերջին «Շ»-ն: Ձէք կարող իմանալ: Ծածկւած է նա. նրա երեսը չէք տեսնելու: Սակայն երբ մէկը ծածկում է իր երեսը ու էնպէս է խօսում, նա արդէն երես չունի, աներես է: Նա արդէն պատասխանատու չի կանգնած իր խօսքի համար, ինչ ասէք կը գրի, և գուցէ հէնց ձեզ հետ էլ տեղն ընկած տեղը կը զայրանայ նոյն «Շ»-ի դէմ, հազար ու մին մոլորութիւններ կը ստեղծի, ապականութիւն կը մտցնի մեր՝ առանց էն էլ՝ վատ բարբերի մէջ:

Ես հասկանում եմ, երբ մարդ մի լաւութիւն է անում և իր անձն ու անունը ծածկում: Էդ համեստութիւն է: Եւ անաբխութիւն է: Բայց երբ սուտ ես ասում, խաբում ես, զրպարտում ես ու թաքնում, անուշդ կեղծում, երեսդ ծածկում—էդ պարզ անբարոյականութիւն է: Արդ, ո՞վ է էս «Շ»-ը, որ մէջ տեղը սուտ է ասել ու ինքը չքացել, մտել «Շ»-ի տակ: Ի՞նչ իմանաք:

Դէպք է եղել, որ «Մշակի» «Շ»-երից մէկի համար պ. Շիրինեանի օժիքն են բռնել: Նա—մարդը յայտարարեց, որ ինքը չի: Ես համոզւած եմ, որ էս «Շ»-ն էլ նա չի: Հապա ո՞վ է: Շահրի-մարը, Շաւարշը, Շառնյը, վերջապէս ճր «Շ»-ն:

Որ «Շ»-ն էլ որ լինի—ինչ որ ասում է, տակիցը մինչև գլուխ սուտ է ասում:

Թիֆլիզի (նոր) յանձնաժողովը զըպրօցական ֆոնդի համար դեռ ոչ մի դիմում չի արել: Մինչև էսօր ինչ զուամրներ ստացել են—ստացել են առանց դիմումի: Թէ Զարգարեան-Վարդապարեան և ընկ., թէ պ. Ա. Մելիք-Ազարեան և թէ Տէր-Պետրոսեան երեխաները բոլորս էլ զրկել են իրենք ինքնաբերաբար: Յանձնաժողովը նրանց ոչ մէկի մօտ չի գնացել, մատեան չի առաջարկել և ոչ էլ յորդորել է թէ էսքան էլ աւէք զրական ֆոնդին, ինչպէ՞ք գրում է «Մշակի» «Շ»-ը:

Զարգարեան-Վարդապարեան և ընկ. իրենք են որոշել ու յատկացրել 500 ռ. զպրօցական ֆոնդին, 500 զրական ֆոնդին: Պ. Ա. Մելիք-Ազարեանը առանց իրեն դիմելու, ինքն է որոշել ու յատկացրել հազար ռ. զպրօցական ֆոնդին և հազար ռ. զրական ֆոնդին: Դպրոցական ֆոնդին տալուց յետոյ նա ինքն է ասել «բայց ես զրական ֆոնդին էլ եմ համակրում, և մինչև անգամ աւելի համակրում եմ զրական ֆոնդին, և որոշել եմ երկուսին էլ մասնակցել հաւասար կերպով»:

Եւ յանձնաժողովի գործունէութիւնը, որ դեռ նոր է սկսում—չի եղել «կէս խլուրդային», ինչպէս շարախօսում է «Մշակի» «Շ»-ն, այլ պարզ, աշխարայ, և ամեն շարաք սպաւում են նրա որոշումները մամուլի մէջ: Միայն «Մըշակն» է, որ չի տպում: Ինչպէս չը տպեց և էն լուրը, թէ Մելիք Ազարեանը զրական ֆոնդին յատկացրել է հազար բուրլի, թէ և էդ լուրը պաշտօնապէս տւած էր իրեն:

Ինչ վերաբերում է նրան, թէ յորեւեանական յանձնաժողովի մէջ մարդիկ կան, որոնք դէմ են եղած կամ դէմ են զպրօցական ֆոնդին, դարձեալ սուտ է ասում: «Շ»-ն: Եւ լաւ կը լինի, որ էս մասին խօսք չը յարուցանեն «Մշակ»-ում: Թէ չէ ստիպւած կը լինենք մէջ բերելու էն պատմութիւնը, թէ 1910 թ.ի աշնանը, էջմիածնում, պատգամաւորական ժողովում, ինչ կուով կալոցացանք Հ. Առաքելեանի և իր համախոհների դէմ անցկացնել կրթական ֆոնդի խնդիրը: Եւ այժմ էլ զրանք եթէ կողմնակից են զպրօցական ֆոնդին—միայն մի պայմանով, որ նրանով խանգարեն զրական ֆոնդը: Էլ չեն տեսնում թէ Տիգոր գիւղի ուսուցիչը և իր նմաններն են, որ թրթրում են ու հոգս են քաշում զրական ֆոնդի վրայ: Եւ զպրօցը սիրողը նոյն սիրով սիրում է զրականութիւնը, ինչպէս զրականութիւնը սիրողը սիրում է զպրօցը, և էս տեսակ մարդկանց սէրն ու ոգևորութիւնն է, որ գործ պիտի շինի հայոց կուլտուրական մեծ տօնին, զըպրօցի ու զրականութեան պայծառ տօնին, ինչքան ուզում են «Շ»-երը խօսեն ու շարախօսեն:

Յովհ. Թումանեան

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՏՈՒՐԲԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

1896 թ. ակադեմիայի Ծանկաստանում նորից կոտորում էին հայերին: Մորթւում էր անդէն ժողովուրդը, բացակայում էր ինքնապաշտպանութիւնը:

**ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԸ ԵՒ «ՄՇԱԿԻ» «Շ»-ԵՐԸ

Հայոց տիպ ու տառի մեծ ու պայծառ տօնը դարձել է մի շտտ այլանդակ կուի առարկայ: Էդ ամօթալի կուի պատճառը Թիֆլիզն եղաւ, Թիֆլիզում էլ մի քանի մարդիկ:

Կուի գլխաւոր առարկաներից միին էլ դարձրին Հայոց Գրողների Ընկերութեան զրական ֆոնդի խնդիրը: «Մշակը» ամեն ձևով, երբեմն իրրև բաց թշնամի, երբեմն իրրև կեղծ բարեկամ գրեց և շարունակում է գրել ու յորդորել զրական ֆոնդի դէմ: Ըզնում է, որ զպրօցական-զրական մեծ տօնին զրական ֆոնդը ոչինչ չստանայ: Ասում է դա կը խանգարի զպրօցական ֆոնդին, թէ և միևնոյն ժամանակ դեռ շարունակում է փող հաւաքել իրեն, «Մշակի» ֆոնդի համար: Երևի նա մտածում է թէ հայոց զրականութիւնը մի «Մշակ» չարժի կամ հայոց զրողները «Մշակի» խմբագիրները ու աշխատակիցները չափ արժէք չունեն հայ ժողովրդի համար:

Իր վատ նպատակին հասնելու համար, զրական ֆոնդին փրստելու հա-